

գոյն պատիւներով ընդունիլ զայն : Ուստի Լեւոնը դիմաւորելու համար ղրկեց իր պալատին գլխաւոր պաշտօնատարներն եւ ուրիշ բազմաթիւ անձնաւորութիւններ : Իսկ երբ Լեւոն մօտեցաւ , Հոփքարդ՝ իր շուրջն ունենալով ձիաւորներու բազմութիւն մը՝ անձամբ դիմաւորեց Հայոց թագաւորն եւ մեծ քաղցրութիւնով ողջունեց ու խաղաղութեան համարյւր տալով՝ զինք տեսնելուն համար զգացած սխրանքն յայտնեց : Յետոյ արքայական պալատ առաջնորդելով՝ հանգէսներ սարքեց ու պատիւներ ընծայեց Լեւոնի, եւ չքեղ պալատ մը՝ անոր տրամադրութեան տակ դրաւ (1) :

Հանդիսական օրերն անցնելէ ետք՝ Անգլիայի թագաւորն իր բոլոր բարձր պաշտօնէութիւնն ու խորհրդականներն Ուեստմինստըրի պալատն հրաւիրած էր , Հայոց թագաւորին առաջարկը պաշտօնապէս լսելու համար :

Ժողովին նախագահը Լեւոնէ խնդրեց պարզել իր տեսութիւնը՝ Արդ՝ Լեւոն հետեւեալ յուզիչ ատենաբանութիւնն ըրաւ .

« Ոչ եթէ շողորթութիւնն՝ այլ մանաւանդ թէ եղբայրական եւ ճշմարիտ սէրն է որ կը հարկադրէ զիս ըսելու ձեզ , թէ արեւելեան ժողովուրդք՝ մինչեւ հիմա՝ հիացած են ձեր զօրութեան եւ մեծութեան վրայ . եւ զիրենք ուրիշ բան չարգելուը՝ զձեզ դրուատեօք պանծացնելէ , բայց եթէ այն անհաշտ ատելութիւնն՝ զոր ունին երկու մեծագոյն թագաւորութիւնք աշխարհի : Աւա՛ղ , իմ թշուառութիւնս խիստ անսովոր է , եւ բախտն անդադար կը թշնամանէ զիս , եւ կը ստիպէ զիս յանդիմանել զձեզ՝ թէ այս անգութ պառակտումն է որ պատճառ եղաւ իմ կործանմանս՝ անհաւատից եւ Յիսուսի թշնամեաց անարգել յաղթական եղող զէնքերէն , եւ թէ նոյն ինքն կը ձգէ զիս այս ողբալի վիճակիս մէջ , ըսելու՝ թէ թագաւորեցի ես ալ , եւ անաւասիկ այն մեծ թագաւորս՝ խեղճ աքսորական մը դարձած՝ կ'ապրիմ հեծելու համար բախտին անուոց ճնշման տակ . այն բախտին՝ որ պսակը՝ զարդ մը կը համարի իմ յուղարկաւորութեան հաշմանդիս , եւ թագն՝ իրրեւ պատանք մը ի մահ դատապարտեալ յանցաւորաց : Ո՛վ հզօր իշխանք , եթէ հատուցած ըլլայիք Աստուծոյ այն ծառայութիւնը՝ զոր իրեն կը պարտին ձեր զէնքերը , եւ առ որ շատ անգամ յորդորուեցաք , արեւելքի տառապեալ քրիստոնեայք՝ — զոր նա գնեց իւր արեամբ՝ — այնչափ չէին հառաչեր սրոյ եւ մուրդութեան ճնշման տակ , այն աշխարհաց քաղաքները՝ որ երբեմն այնչափ ջերմեռանդ էին քրիստոնական հաւատոյ , եւ գլխաւորապէս Բեթղեհէմ՝ փոքրիկ Յիսուսին ծննդավայրը , եւ աստուածայինն Սիոն՝ զոր նա այնչափ պայծառացող եւ նշանաւոր ըրաւ իւր հրաչքներով , չէին հեծեր այսօր Թրքաց , Արաբաց եւ Պարսից անտանելի լծոյն ներքեւ : Բայց դուք կ'արհամարհէք այս փառաւոր

(1) *Chronique du Religieux de Saint-Denys*, fs. Ա, եր. 421-423 :